

Tel.: +374 10 287656
Fax: +374 10 287650
e-mail: info@mikshin.am
www.mikshin.am



Adonts 8, 170
Yerevan 0014, Armenia
CEO Stepan Khachatryan
Tax Code 0156178

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հարգելի սեփականատերեր,


Հիմք ընդունելով Պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի Ադոնցի փողոցի N 6/1 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրից բնակարանների վաճառքի կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2014թ. թիվ 821-Ն որոշման (այսուհետև՝ Որոշում) և «ՄԻԿՇԻՆ» ՍՊ ընկերության, Ձեր և ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի (նաև «Արդշինբանկ» ՓԲ ընկերության) միջև կնքված առուվաճառքի պայմանագրի պահանջները, հայտնում ենք, որ համատիրություն ստեղծելու նպատակով 2018թ. փետրվարի 21-ին, ժամը 12:00-ին Դավիթ Անհաղթ 21 հասցեում (Ջեյթուն մշակույթային կենտրոն) հրավիրվում է ՀՀ, Երևան, Ադոնցի 6/1 հասցեի բնակարանների և այլ նշանակության տարածքների բոլոր սեփականատերերի ընդհանուր ժողով:

Ժողովում քննարկվելու են ՀՀ, Երևան, Ադոնցի 6/1 հասցեի համատիրության վարչության անդամների, համատիրության նախագահի և կառավարիչի ընտրության, ինչպես նաև համատիրության հիմնադրման մասին պայմանագրի կնքման հետ կապված հարցերը:

Հարգանքով՝

Տնօրեն՝

15.02.2018թ.



Ստեփան Խաչատուրյան

Ծանոթություն: «Համատիրության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Բազմաբնակարան շենքերում համատիրությունը կարող է ստեղծվել յուրաքանչյուր շենքում առնվազն ընդհանուր բաժնային սեփականության մեջ 50 և ավելի տոկոս բաժին ունեցող շինությունների սեփականատերերի անդամությամբ»: